«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան

Հաստատություն՝ ABC մանկական զարգացման և ժամանցի կենտրոն

Դաստիարակ՝ Անուշ Հախվերդյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն.....3

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան

Թեմա 1.1 Նախադպրոցական կրթության առանձնահատկությունները.....5

Թեմա 1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ոլորտներն ու կարողունակությունները.....10

Գլուխ 2. Ուսումնական գործընթացի պլանավորում նախադպրոցական ուսումնական հաստատությունում

2.1 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում.....13

2.2 Դասի պլան.....15

Եզրակացություններ.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

Ներածություն

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման առանձնահատկությունների ուսումնասիրման առաջնային օղակը նախադպրոցական մանկավարժությունն է: Նախադպրոցական կրթության արդյունավետությունը ապահովելու համար ստեղծվել է հիմնական ուղեցույց՝ պետական կրթական չափորոշիչը, որը մանկավարժական աշխատողին հնարավորություն է տալիս համակարգված և արդյունավետ պլանավորել ուսումնական գործընթացը: Պետական կրթական չափորոշչում հստակ ներկայացված են նախադպրոցականի կրթության ու զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջները, ինչպես նաև պարտադիր կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի երեխան, ուստի յուրաքանչյուր մանկավարժական աշխատող, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, պետք է անպայման պահպանի նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշշային պահանջները, որպեսզի կարողանա ունենալ համապատասխան վերջնարդյունքներ:

Մեր հետազոտական աշխատանքի ուսումնասիրման հիմնական ***նպատակն է***՝ առաջարկել փորձարարությամբ հիմնավորված այնպիսի աշխատանքի ձևեր, մեթոդական հնարներ, որոնք կնպաստեն նախադպրոցական տարիքի երեխաների արդյունավետ զարգացմանը՝ այդ գործընթացում մեծապես հաշվի առնելով և հիմք ընդունելով պետական կրթական չափորոշչի պահանջները:

Մեր նպատակն իրականացնելու համար մենք մեր առջև դրեցինք հետևյալ հիմնական ***խնդիրները*** ՝

- ✓ ուսումնասիրել և վերլուծել թեմային առնչվող մասնագիտական գրականություն, նախադպրոցական կրթական ծրագրերը,
- ✓ առաջարկել մեթոդական ցուցումներ պարապմունքների կազմակերպման և դասի արդյունավետությունը բարձրացնելու համար,
- ✓ ընդհանրացնել ստացված արդյունքները և կատարել եզրակացություններ:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք հետևյալ ***մեթոդները*** ՝

- համապատասխան գրականության ուսումնասիրում, դրանց վերլուծություն, ընդհանրացում,
- մանկավարժական գործընթացի դիտում /դասալսումներ/,
- փորձարարական դասերի նախապատրաստում և վարում,
- ստացված արդյունքների համեմատական վերլուծություն:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

1.1 Նախադպրոցական կրթության առանձնահատկությունները

Նախադպրոցական մանկավարժությունը տարիքային մանկավարժության առաջին օղակն է, որն ուսումնասիրում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Նախադպրոցական մանկավարժության գիտական հիմնադիրն է Յան Ամոս Կոմենսկին, որն առաջինը իր <<Մայրական դպրոց>> գիտամեթոդական աշխատության մեջ ներկայացրեց նախադպրոցականի դաստիարակության մանկավարժական մոտեցումների համակարգ և մեթոդական հանձնարարականներ: Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունը զարգանում է բուռն տեմպերով, մի շարք հարակից գիտությունների հետ փոխկապված, որոնց գիտական տվյալներն ու արդյունքները լրամշակում և հարստացնում են նախադպրոցական մանկավարժության գիտական հենքը:

Անքակտելի է նախադպրոցական մանկավարժության կապը հոգեբանության հետ, մասնավորապետ տարիքային և մանկավարժական հոգեբանության, զարգացման և անձի հոգեբանության, ինչպես և սոցիալական և կիրառական հոգեբանության հետ: Նախադպրոցական մանկավարժությունը սերտ կապված է մի շարք կենսաբանական բժշկական գիտությունների հետ, որոնց ուսումնասիրության օբյեկտը, ինչպես և մանկավարժությանը, մարդն է, երեխան: Դրանցից են անատոմիան և ֆիզիոլոգիան, գենետիկան և էկոլոգիան, բժշկագիտությունը, մանկաբուժությունն ու հիգիենան: Իբրև հումանիտար գիտություն նախադպրոցական մանկավարժությունն առնչվում է հասարակական գիտություններից՝ փիլիսոփայության և մարդաբանության, սոցիոլոգիայի, բարոյագիտության նգեղագիտության հետ: Հետաքրքիր է նաև նախադպրոցական

մանկավարժության համագործակցությունը ճշգրիտ գիտությունների հետ, որոնց հստակ մեթոդներն ու գնահատման եղանակները ներթափանցում են նախադպրոցական մանկավարժության ոլորտ զգալի արագությամբ և նպաստում մանկավարժական ցանկացած գործընթացի նախնական մոդելի մշակմանը և գիտափորձի արդյունքների օբյեկտիվ գնահատմանը: Բնականաբար, նախադպրոցական մանկավարժությունը զարգանում է մանկավարժական գիտությունների հետ սերտ կապված, հիմք ընդունելով դրանց տեսական հիմունքները և մեթոդական առանձնահատկությունները: Նախադպրոցական մանկավարժության անբաժանելի մասն են կազմում նախադպրոցականի դաստիարակության մասնավոր մեթոդիկաները.

– երեխայի խոսքի զարգացման տեսությունը և մեթոդիկան,
– երեխայի ֆիզիկական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան,
– երեխայի երաժշտական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան,
– երեխայի մաթեմատիկական պատկերացումների զարգացման տեսությունը և մեթոդիկան,
– նախադպրոցականի էկոլոգիական կրթության տեսությունը և մեթոդիկան,
– մանկան ստեղծագործության զարգացման տեսությունը և մեթոդիկան:

Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջին օղակն է, որի հաջողություններով է պայմանավորված ողջ կրթական համակարգի առաջընթացը: Կրթական ցանկացած բարեփոխում սկիզբ է առնում և փորձարկվում է նախադպրոցական կրթության ոլորտում: Նախադպրոցական կրթության տարաբնույթ խնդիրների մշակմամբ և իրականացմամբ զբաղվում է նախադպրոցական մանկավարժությունը: Նախադպրոցական մանկավարժության գիտական ուսումնասիրությունների դաշտն են կազմում մանկավարժական այն բոլոր գործընթացները, որոնք ուղղված են նախադպրոցահասակ երեխաների զարգացմանն ու կրթությանը[1]: Նախադպրոցական մանկավարժության առարկան է նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և ուսուցման

1Krtahartak@editprint.am

գործընթացների համակարգը: Գիտության կարևորագույն գործառույթները բխում են գիտության առարկայից և կանխորոշում են մանկավարժական խնդիրների իրականացման մոտեցումներն ու առանձնահատկությունները:

Նախադպրոցական մանկավարժության հիմնական գործառույթներն են .

-նախադպրոցական կրթության համակարգի զարգացման ուղղությունների կանխատեսումը և նախագծումը,

-նախադպրոցական կրթության չափորոշչի մշակումը,

-նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, նոր մոտեցումների և տեխնոլոգիաների մշակումը,

-նախադպրոցականի ուսուցման և կրթության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը, ուսուցման ժամանակահունչ եղանակների մշակումը,

-նախադպրոցականի համակողմանի զարգացման մանկավարժական պայմանների ապահովումը,

Ամփոփելով նախադպրոցական մանկավարժության գործառույթները, կարելի է նշել, որ դրանք կրթող, դաստիարակող և ուսուցման բնույթի են և ուղղված են նախադպրոցականի լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացմանը:

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է:

Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է ընտանիքին՝ պարտավորվելով պայմաններ ստեղծել ընտանիքում երեխաների համակողմանի զարգացման և խնամքի կազմակերպման համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ մսուրներ (2-3 տարեկան երեխաների համար), մանկապարտեզներ (3-6 տարեկանների համար), մսուր-մանկապարտեզներ (միացյալ)[2]:

Նախադպրոցական կրթության նպատակները և խնդիրները

[2] https://lib.armedu.am/article/9193

1. Նախադպրոցական կրթության նպատակներն են՝

ա) երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը.

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

2. Նախադպրոցական կրթության խնդիրներն են՝

ա) նախադպրոցական տարիքի երեխաների մեջ մայրենի լեզվով հաղորդակցվելու և հաշվելու տարրական կարողությունների զարգացումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխայի խնամքը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը.

գ) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, աշխատանքային տարրական հմտությունների և կարողությունների ձևավորումը.

դ) հայրենիքի նկատմամբ սիրո սերմանումը, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, ազգային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումն ու արմատավորումը.

ե) երեխայի անհատականության ձևավորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը.

զ) նախադպրոցական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ կրթությունը շարունակելու պատրաստվածության ապահովումը.

է) ընտանիքին սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը:

Նախադպրոցական համակարգի գործունեության ուղղություններից մեկը ծնողների կրթության կազմակերպումն է:

Ծնողների կրթության հիմանական նպատակն է՝ ծնողներին ուսուցանել, թե ինչպես է ընթանում երեխաների բազմակողմանի աճը և զարգացումը, ինչպես են

փոփոխվում ծնողների վերաբերմունքը, համոզմունքներն ու գործունեության ձևերը: Ծնող դառնալու փաստն արդեն իսկ ենթադրում է երեխայի կյանքի բնականոն պայմանների և զարգացման համար անհրաժեշտ խնամքի և աջակցության ապահովման պատրաստակամություն[3]:

Գոյություն ունեն 6 կարևոր պարտականություններ, որոնք ծնողները պոտք է ստանձնեն իրենց երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու անդորրն ապահովելու համար՝

1. Ապահովել անվտանգ միջավայր,
2. Հոգալ երեխայի տարրական կարիքները,
3. Ապահովել երեխայի ինքնությանն ներկայացվող պահանջները,
4. Երեխայի մեջ սերմանել բարոյականություն և բարոյական արժեքների գնահատան ու պահպանման միտում: Դրանք են՝
   - ազնվություն,
   - հարգանք,
   - պատասխանատվություն,
   - կարեկցանք,
   - համբերություն,
   - ներողամտություն,
   - առատաձեռնություն:
5. Երեխայի մեջ փոխադարձ հարգանքի զգացում զարգացնելու նպատակով,
6. Ներգրավվել երեխայի կրթության գործընթացում:

[3] Մեթոդական ձեռնարկ նախադպրոցական կրթություն իրականացնող մանկավարժների համար, Երևան 2013, էջ 11

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ոլորտներն ու կարողունակությունները

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմքում նախադպրոցականների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումներն են, որոնք ներառում են ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները: Չափորոշչում հաստակ ամրագրված են ուսումնական պարապմունքների, դրանց բովանդակության, ծանրաբեռնվածության, երեխաների հետ տարվող աշխատանքների, մշտադիտարկումների ու կարիքների գնահատման երեխաների մասին դրույթներ: «Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը»[4]: Նախադպրոցական կրթությունը երեխայի իմացական ոլորտը զարգացնելու գործառույթից զատ պետք է զբաղվի նաև վերջինիս մոտ առանցքային կարողունակությունների ձևավորմամբ: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում հստակ սահմանված են **նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները: «**Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով»: Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ:

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն,
2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,
3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5. թվային և մեդիա կարողունակություն,
6. մշակութային կարողունակություն,
7. մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն,
8. տնտեսական կարողունակություն,
9. ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Ըստ էության այս կարողունակություններն ունեն ոլորտային ուղղվածություն, սակայն հարկ է նկատել, որ ուսուցման ու զարգացման գործընթացում դրանք մեկ ամբողջություն են, քանի որ մեկը լրացնում է մյուսին, դառնում շարունակողն ու ամբողջացնողը: Լեզվական և հաղորդակցական կարողունակության ձևավորմամբ խթանվում է նախադպրոցականի կապակցված խոսքը, երկխոսել և մենախոսելու կարողությունը, ինչն էլ սոցիալականացման հենքն է: Ստացվում է, որ այս կարողունակության ձևավորմամբ խթանվում է նայն մյուս կարողունակությունների ձևավորումը: Նախադպրոցականի համար սահմանված կրթական ու զարգացման ոլորտներից բացի չափորոշչում ամրագրված են դրանցից ակնկալվող երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները՝ ըստ նախադպրոցական տարիքի փուլերի: Նախադպրոցական կրթության բովանդակությունն իրենից ներկայացնում է նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման և կրթական ընդհանուր նպատակներից բխող գիտելիքների, կարողությունների, հմտությունների նաև արժեքային համակարգի ձևավորում:

«Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.
2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.
3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.

4) իմացական ոլորտ.

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ»[3]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի պլանավորման հենքը չափորոշիչն է: Դրանում ամրագրված դրույթներն ու սկզբունքները պարտադիր են նախադպրոցական կրթության պլանավորման համար: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի, նպատակային էքսկուրսիայի կամ տոնակատարության նպատակը պետք է բխի նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունից, վերջինների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վերջնարդյունքներն ունենալու ակնկալիքվ:Կրթության ու զարգացման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն, հաշվի առնվեն նրանց հետ տարվող անհատակողմներեշիչ աշխատանքների ու մշտադիտարկումների արդյունքները: Երեխաները պետք է բնականոն ինտեգրվեն սոցիալական միջավայրին, ունենան տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կապակցված, ֆիզիկական պատրաստվածություն, իմանան ու ճանաչեն ազգային ավանդույթներն ու իրազեկ լինեն համամարդկային արժեքներին, ունենան տրամաբանական ու ստեղծագործական մտածողություն:

Այս ամենն ապահովելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդամանյավարժական մոտեցումներ, ունենան մասնագիտական աճ, ինքնակրթվեն և արդյունավետ համագործակցեն միմյանց հետ:

Գլուխ 2. Ուսումնական գործընթացի պլանավորում նախադպրոցական ուսումնական հաստատությունում

2.1 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ուսուցման ու զարգացման գործընթացի պլանավորումն անչափ կարևոր նախապայման է: Սա առաջին հերթին հստակ նախանշում է նպատակների, խնդիրների և ակնկալվող վերջնարդյունքների, պարապմունքին կիրառվող մեթոդամանկավարժական մոտեցումները, դիդակտիկ ու զննական պարագաները և այլ հարցեր: Այսպես նախադպրոցական մանկավարժի աշխատանքը դառնում է պլանավորված, կանոնակարգված ու կանխատեսելի: Ուսումնական գործընթացի պլանավորումը նաև բարձրացնում է մանկավարժի մասնագիտական որակները, թույլ տալիս, որ վերջինս փնտրի ու գտնի ուսուցման բովանդակությանը համապատասխանող խթանիչ միջոցներ, պարապմունքը հետաքրքիր ու չկրկնվող անցկացնելու ձևեր:

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավաժը, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, հիմք է ընդունում նախադպրոցական կրթական չափորոշչային ոլորտները, կրթության բովանդակությունը և պահանջվող կարողունակությունները: Առավել ծավալային պլանավորում են պահանջում հանդեսները, նպատակային էքսկուրսիաները, որոնց ընթացքում նույնպես ապահովվում է նախադպրոցականների կրթության ու զարգացման գործընթացը:

Որևէ պարագայում դաստիարակը չպետք է անպատրաստ մտնի խմբասենյակ: Ուսումնական պարապմունքի պլանավորումը նախադպրոցական մանկավարժական աշխատողից պահանջում է ոլորտային ուսումնասիրություններ, ՏՀՏ ստեղծելու և կիրառելու կարողություն, գործընկերների հետ համագործակցելու ունակություն:

Նախադպրոցական կրթության մեջ կարևոր բաղադրիչ է նաև ինտեգրված ուսուցումը: Այս պարագայում ուսումնական պարապմունքը պլանավորվում է մի քանի մանկավարժների կողմից, մեկ պարապմունքի շրջանակներում իրականացվում է բազմաբաղադրիչ մոտեցում: Ինտեգրված ուսումնական պարապմունքները նպաստում են սաների համակողմանի զարգացմանը, խթանում գործնական կարողություններին, զարգացնում պատկերավոր մտածողությունը:

Իր աշխատանքը պլանավորելիս դաստիարակը պետք է կարողանա արդյունավետ փոխգործակցել մյուս մանկավարժական աշխատողների՝ երաժշտության մանկավարժի, պարուսույցի, հատուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի հետ: Բազմամասնագիտական թիմի սերտ համագործակցության կարիքը լինում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների առկայության պարագայում: Այս բազմամասնագիտական թիմն այդ պարագայում համագործակցում է, աշխատում ԱՈԻՊ-ի կազմման և այլ հրատապ հարցերի շուրջ: Այս համատեքստում կարևոր է, որ մանկավարժական կոլեկտիվում տիրի բարոյահոգեբանական կայուն մթնոլորտ, հաստատության մեթոդիստի կողմից կատարված նկատառումները, դիտողություններն ընդունվեն՝ որպես աշխատանքային բնականոն գործընթաց: Իհարկե, մանկապարտեզում սաների կրթադաստիարակչական գործընթացի անմիջական ու կենտրոնական սուբյեկտը դաստիարակն է, ով իր աշխատելաոճով կարող է բարձրացնել կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը[5]:

Այսպիսով, ուսուցման ու զարգացման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժների մասնագիտական որակներից, դրանք զարգացնելու, նոր որակի բերելու մղումներից, ուսումնական պարապմունքի պլանավորման ու նախագծման ընթացքում նրաց ջանքերից:

[5] https://krtahartak.am/

2.2 Դասի պլան

Թեմա-<<Հաց>>

Տեսակը՝ զրույց

Պարապմունքի նպատակը

Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները մարդկության ամենամեծ բարիքի՝ հացի, նրա ստացման և ստեղծման վերաբերյալ: Սեր և հարգանք դաստիարակել հացթուխի նկատմամբ, կարողանալ ըստ արժանվույն գնահատել նրա աշխատանքը, խնամքով վերաբերվել հացի ամեն մի փշուրի նկատմամբ՝ հացի փշուրն էլ հաց է: Հարստացնել բառապաշարը թթխմոր, հացատուն, ցորենահասկ, գրտնակ, հացթուխ, թոնրատուն բառերով:

Ընթացքը

Պարապմունքն սկսում ենք ռուսական ժողովրդական հեքիաթի ընթերցմամբ <<Ով աշխատի, նա կուտի>>:

Այնուհետև ներկայացվում է հացի ստեղծման պատմությունը. վաղուց, շատ վաղուց մարդիկ բերք չեն աճեցրել, կյանքը նրանց համար շատ դժվար է եղել: Եվ ահա մի օր նրանք գտնում են ցորենի հասկի մի հատիկ, օրհնում են և այն սուրբ անունով Հաց են անվանում:

Ապա ներկայացվում է հացի ստացման ուղին՝ համապատասխան նկարների շարք ցուցադրելով և տեսասահիկի միջոցով:

Թարմացնող վարժություն

Մնջախաղի միջոցով բեմականացնել տարբեր իրավիճակներ /ցորենի աճը, խմոր հունցելու, ալյուր մաղելու, հաց թխելու հաջորդականությունը…/։

Հացի տեսակները՝ լավաշ, մատնաքաշ, բոքոն, պուրի, բլիթներ…։

Ասացվածքների ներկայացում և իմաստի բացատրություն

Տաշտներդ լի հաց լինի,
Դռներդ միշտ բաց լինի։
Ով ինչ ցանի, այն կհնձի։

Հաց ու պանիր,
Կեր ու բանիր։
Որտեղ հաց՝ այնտեղ կաց։

Երեխաների հետ միասին պատրաստում ենք բլիթներ։ Խմոր պատրատելու գործընթացին մասնակցում են նաև երեխաները։

Եզրակացություններ

Այսպիսով՝ մեր ուսումնասիրությունների արդյունքում եկանք հետևյալ եզրակացությունների՝

-յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի պլանավորման հիմքը պետական կրթական չափորոշիչն է,

-յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի բովանդակություն պետք է պարտադիր լինի երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան,

-ուսուցման գործընթացը արդյունավետ և դյուրին դարձնելու համար մանկավարժը պետք է օգտագործի ժամանակակից տեխնոլոգիաներ,

-ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդական մոտեցումներ, ունենան մասնագիտական աճ, մշտապես ինքնակրթվեն և արդյունավետ համագործակցեն միմյանց հետ,

-մանկավարժի համար չափազանց կարևոր է նաև ուսումնական գործընցացի պատշաճ պլանավորումը,

-ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժների մասնագիտական որակներից, ուստի դրանք պետք է մշտապես զարգացնել և կատարելագործել,

- կրթության ու զարգացման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն, հաշվի առնվեն նրանց հետ տարվող անհատակողմներեշիչ աշխատանքների ու մշտադիտարկումների արդյունքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67862 «ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանը ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար եվ մանկավարժական կազմի տարիֆառրակավորման բնութագրերը հաստատելու մասին»
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ:
3. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»:
4. Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019:
5. Krtahartak@editprint.am
6. Մեթոդական ձեռնարկ նախադպրոցական կրթություն իրականացնող մանկավարժների համար <<Ծնողների կրթություն>>, Երևան 2013:
7. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, Լ.Սարգսյան <<Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում>>, Երևան 2013